

Լ. ՄԵՐԼԻՍ

ՃԱՌ

ՀԱՅԿ(Բ)Կ XVIII

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՊԵՏՀՐԱՏ

ԲԱՆԱԳԱՆ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

05 FEB 2018

Լ. ՄԵԽԼԻՍ



ՃԱՌ
ՀԱՄԿ (Բ) Կ XVIII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1939 թ. մարտի 14-ին

Գ Ե Տ Հ Բ Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



11-288359

А. МЕХЛИС
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ ВКП(б)
Аргмиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Ընկեր ղեկեղատներ, ուրախալի և պանծալի յե լինել Լենինի—Ստալինի կուսակցության XVIII համագումարի ղեկեղատ, այն համագումարի, վորը բացառիկ դեր և խաղալու մեր յերկրի ու ամբողջ միջազգային բանվորական շարժման կյանքում:

Մեր համագումարը լսեց Խորհրդային Միության միջազգային ու ներքին դրության՝ իր վարպետությամբ անգերազանցելի վերլուծությունը: Ընկեր Ստալինի զեկուցումը մարքսիստական—լենինյան թեորիան հարստացրեց համալսարհային—պատմական նշանակություն ունեցող մի փաստաթղթով, այդ զեկուցումը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը բարձրացնում և նրա զարգացման բարձրագույն ստադիայի վրա:

Ընկեր Ստալինը, մեր պայքարի ու շինարարության 20-ամյա փորձի ընդհանրացման հիման վրա, մեր հասարակության զարգացման յերկու գլխավոր փուլերի վերլուծության հիման վրա, կերտեց կապիտալիստական չրջապատման պայմաններում գոյություն ունեցող սոցիալիստական պետության թեորիան:

Լենինը պատրաստվում եր գրելու իր «Պետություն և հեղափոխություն» աշխատության յերկրորդ մասը, բայց մահը նրան խանդարեց կատարել այդ խնդիրը: Սոցիալիստական պետության գոյության ամենահարուստ փորձը մնաց չընդհանրացված: Այդ փորձն ընդհանրացրեց Լենինի դորժի հանճարեղ շարունակողը—մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը: Բնութագրելով սոցիալիստական պետության զարգացման յերկրորդ փուլը, ընկեր Ստալինն առաջ.

«Մենք այժմ ունենք բոլորովին նոր, սոցիալիստական պետություն, վորը դեռևս տեսնված չե պատմության մեջ

և վորն իր ձևով ու փունկցիաներով զգալիորեն տարբերվում է առաջին ֆագի սոցիալիստական պետությունից:

Սակայն զարգացումը չի կարող կանգ առնել դրա վրա: Մենք գնում ենք ավելի առաջ, դեպի կոմունիզմը: Մեզ մոտ պետությունը կայսեպանվի՞ արդյո՞ք նաև կոմունիզմի ժամանակաշրջանում:

Այո, կայսեպանվի, յեթե լիկվիդացիայի չենթարկվի կապիտալիստական շրջապատումը, յեթե չվունչացվի ռազմական հարձակումների վտանգը դրսից: Ընդամեն հասկանալի յե, վոր մեր պետության ձևերը նորից կփոխվեն ներքին ու արտաքին իրադրության փոփոխման համեմատ:

Վոչ, չի պսեպանվի և կմահանա, յեթե կապիտալիստական շրջապատումը լիկվիդացիայի յենթարկվի, յեթե նա փոխարինվի սոցիալիստական շրջապատումով:

Այսպես է սոցիալիստական պետության հարցի վիճակը»:

Ստալինյան խորությամբ, սակայն լայն մասսաներին հասանելի ձևով, պատասխան է տրված արդիականության ամենաակտուալ հարցերին: Մեզանից յուրաքանչյուրի և ամբողջ կուսակցության քաղաքական մտահորիզոններն ընդարձակվեցին: Սոցիալիստական պետության ստալինյան թեորիան նոր եպոխա բացեց սոցիալիզմի կողմից կապիտալիզմի դեմ ուղղված մրցության մեջ, մեծ աշխատանքների ծրագիր է տալիս մեզ մի ամբողջ ժամանակաշրջանի համար—մինչև կոմունիստական հասարակության լրակատար կառուցումը, մինչև համաշխարհային պրոլետարական հեղափոխության հաղթանակը:

Սոցիալիստական պետության ստալինյան թեորիան իր նշանակությամբ կարող է համեմատվել մի, առանձին վերցրած, յերկրում սոցիալիզմի կառուցման թեորիայի հետ: Հենվելով մի յերկրում սոցիալիզմի կառուցման լենինյան—ստալինյան թեորիայի վրա, մենք ջանջախեցինք բանվոր դասակարգի բոլոր ու ամեն տեսակի թշնամիներին և հիմնականում կառուցեցինք սոցիալիստական հասարակություններ: Հենվելով կապիտալիստական շրջապատման պայմաններում գտնվող սոցիալիստական պետության ստալինյան թեորիայի վրա, մենք կհասնենք պրոլետարական հեղափոխության հաղթանակին ամբողջ աշխարհում:

Ընկեր Ստալինը նշեց նաև Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի խնդիրները կոմունիզմի ժամանակաշրջանում: Յես այսպես հասկացա այդ խնդիրները.

1) Հիշել կապիտալիստական շրջապատման մասին և աչքի լույսի պես պահպանել Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը լրտեսների ու դավերասանների ներթափանցումից:

2) Միշտ և ամենուրեք պատրաստ լինել թշնամուն ջախջախելու համար:

3) Վոչ միայն չոր պահել վստողը, այլև մշտապես ունենալ բավարար քանակությամբ զսպառապիկներ այն խնդարների համար, վորոնք յերազում են խորհրդային Միության վրա «խաչակրաց արշավանք» կատարելու մասին:

4) Յեթե յերկրորդ խմբերիալիստական պատերազմն իր սուր ծայրով չուռ գա աշխարհում առաջին սոցիալիստական պետության դեմ, ապա ռազմական գործողությունները փոխադրել հակառակորդի տերիտորիայի վրա, կատարել մեր խնտերնացիոնալ պարտականությունները և շատացնել խորհրդային հանրապետությունների թիվը: (Ծափահարություններ):

Պաշտպանության Ժողովրդական Կոմիտեի ընկեր Վորոշիլովը ամբողջ համադրումարի առաջ յերեկ կրկնեց ղինվորական յերդման խոսքերը, վորը մենք սրբությամբ կկատարենք: Այդ յերդումն հուզմունքով ընդունեցին հարյուրավոր և հարյուր—հազարավոր կարմիր—բանակայիններ, հրամանատարներ, կոմիսարներ ու քաղաշխատողներ: Մենք ունենք հաղորդումներ սրտաշարժ պատկերների մասին, յերբ հատ ու կենտ կիսադրադետ կարմիր—բանակայինները (խնկմեղ մոտ նրանք իսկապես հատ ու կենտ են), վորոնք իրավունք ունեյին, վոր իրենց փոխարեն ուրիշ ընկերներ կարդային յերդումը, բայց նրանք հրաժարվում էյին այդ իրավունքից և 20 բոսկայի ընթացքում տառացիորեն հուզմունքով վանկ առ վանկ կարդում էյին յերդման խոսքերը:

Յես ուղում եմ ընկեր Ստալինին ասել այն քաղղեկի տե-

զակալ կոմյերիտականի խոսքերով, վորը խառն լճի մարտն-
քի ժամանակ—դրոհից տառացիորեն մի յերկու բուլե ա-
ռաջ—խնդրում եր իրեն ընդունել կուսակցության մեջ:
Ահա այդ նամակը.

«6820 մասի կուսկազմակերպությանը

3 հրաձ. վաշտի քաղդեկի տեղակալ

Դ. Կ. Նաումովից

Խնդրում եմ ինձ ընդունել փառապանծ Համկ(բ)Կ-ի շար-
քերը, վորովհետեւ յես, 1931 թվից Համկ(բ)ՅԵՄ-ի շարքերում
դաստիարակվելով, բոլշևիկյան կուսակցության մեջ ստացել
եմ ամուր կոփածություն: Այս բուլեյին գնում եմ կռի:
Մարտնչելու յեմ մինչև հաղթական վերջը, վորպես հայ-
րենիքի հավատարիմ գավակ, ամեն ինչ կտամ հայրենիքի
գործի համար, իսկ յեթե հարկավոր լինի, նաև կյանքս:

Մարտնչելու յեմ այնպես, վոր ընկեր Ստալինն ապի՝
«գերազանց»: Յես ուզում եմ կռվի գնալ իբրև Համկ(բ)Կ
անդամ:

Ոգոստոսի 3

Նաումով»

(Ամբողջ դահլիճում յերկարատև ծափահարություն-
ներ):

Ուղղմական կոմիտեները, քաղաշխատողների, մեր յե-
րեկի բոլշևիկ-հրամանատարների անունից, Բանխորա-
Գյուղացիական Կարմիր Բանակի կուսակցական և կոմերի-
տական կադմակերպությունների անունից յես ուզում եմ
հավաստիացնել բոլշևիկյան պատմական համազումարին.

1. Մենք սրբությամբ կկենսադործենք համաշխարհային
կոմունիզմի մեր մեծ առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի
ցուցումները:

2. Մենք անդուլ-անդադար կաշխատենք, վորպեսզի տի-
րապետենք մարքսիստական-լենինյան թեորիային և գերա-
դանց իմանանք ռազմական գործը:

3. Մենք կանենք ամեն ինչ, վորպեսզի մեր ավիացիայի
ու հրաձիգ կորպուսների համազարկերը, մեր կարմիր-բա-
նակային համազարկերը, վորոնց մասին այնքան վառ ու
համոզիչ կերպով պատմեց համազումարին ընկեր Վորոշի-

լովը, զսպիչ-մահացու շապիկներ լինեն խելագար Փաշիո-
տական ազդեցությունների համար:

4. Մենք կհարվածենք Խորհրդային Միության թշնամի-
ներին այնպես, վոր արագացնենք կապիտալիստական շրջա-
պատման լիկվիդացիան և վորպեսզի ընկեր Ստալինը Բան-
վորա-Գյուղացիական Կարմիր Բանակին տա «գերազանց»
գնահատական: (Բուռն ծափահարություններ):

Ընկեր դեկզատներ, մենք լսեցինք ընկեր Վորոշի-
լովի՝ իր խորությամբ և պայծառությամբ հիանալի ճառը
սոցիալիստական պետության գինյալ ուժերի վիճակի մա-
սին: Այն ամենին, ինչ ստաց ԽՍՀ Միության Պաշտպանու-
թյան Ժողովրդական Կոմիտե ընկ. Վորոշիլովը, ինձ ալի-
լացնելու բան չի մնում: Յես կարող եմ միայն միանալ նրա
յեղդակացություններին և ինձ թույլ կտամ համազումարին
պատմել միջանի մանրամասնություններ Կարմիր բանակի
կուսակցական-քաղաքական դեմքի մասին, վորիանակել խա-
ռան լճի մոտ տեղի ունեցած կռիվների ժամանակ կատար-
ված կուսակցական-քաղաքական աշխատանքների վորոշ
փորձը և պատմել այն մասին, թե ինչպես կուսակցության
Կենտրոնական Կոմիտեն և ընկեր Ստալինը ամեն ոք զբաղ-
վում են Կարմիր Բանակով:

Յերկու տարի յե անցել այն ժամանակներից, յերբ կու-
սակցության Կենտրոնական Կոմիտեն Կարմիր Բանակում
սահմանեց ռազմական կոմիտեների ինստիտուտը: Չնայած
այն բանին, վոր մեզանում աշխատանքի մեջ դեռևս կան մի
շարք բացեր ու թերություններ, մենք կարող ենք ասել, վոր
Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ռազմական կո-
միտեները, քաղաքական ապարատը, Կուսակցական կադ-
մակերպությունները, — հասկանալի յե, կոմունիստ-հրամա-
նատարների հետ միասին, — խոշոր աշխատանք են կատարել,
վորպեսզի կատարեն Համկ(բ)Կ Կենտկոմի վորոշումը ընկեր-
ներ Ստալինի և Վորոշիլովի ցուցումներն ամբողջ ԲԳԿԻ-ի
բոլշևիկացի մասին:

Գամառնիկյան-բուլինյան լրտեսների բանդան ամենից
չառ վնասել և քաղաքական ապարատը ղեկավարող կադրե-
րի ճակատամարտում: Կարևորագույն պաշտոնների համար

այդ բանդան առաջ եր քաշում ժողովրդի թշնամիներին, ապիկար, ամբողջովին աշխատելով, իրենց հոգին ոտարեկըրյա հետախուզություններին վաճառած մարդկանց: Լա-վազույն կոմիսարներին ու քաղաշատողներին, ընդունակ, կուլտուրական և Լենինի—Ստալինի կուսակցությանը հա-վատարիմ մարդկանց այդ բանդան սլահում եր արհամարհ-ված վիճակում, զինվորական ցածր կոչումներում և համե-մատաբար վոչ մեծ պոստերում: Այդ բանդան իր տասպա-ված բանդիտներին ամեն կերպ փրկում եր և, ինչպես սառ-կած կատունների, տեղափոխում եր նրանց ուրիշ պոստերի: Այժմ կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և ընկերներ Ստալինի ու Վորոշիլովի ղեկավարությամբ ղեկավար պոս-տերում գերված են ցածրից բարձրացված լենինյան—ստալի-նյան կոմիվածքի բաղմահագար յերեւելի բոլշևիկներ: Այդ նոր կադրերը լի յեն յեռանդով, վճռականորեն ու սիրով մասսաների մեջ են տանում լենինյան—ստալինյան խոսքը:

Բանակում կոմիսարը լավ ե իմանում իր տեղը: Քաղա-քացիական պատերազմի տարիներին Լենինն ասել ե. «ա-ռանց ռազմական կոմիսարի մենք Կարմիր բանակ չէինք ունենալ»: Քաղաքացիական պատերազմում առաջին կոմի-սարներն եյին ընկերներ Ստալինը և Վորոշիլովը: Ընկեր Ստալինը դեռ 1919 թվին վորոշեց կոմիսարի տեղը և դերը բանակում: Հարավային ճակատի կոմիսարներին ուղղած ինստրուկցիայի մեջ նա գրում եր. «Գնդի կոմիսարը հանդի-սանում ե իր գնդի քաղաքական ու բարոյական ղեկավարը, նրա նյութական և հոգեկան շահերի առաջին պաշտպանը: Յեթե գնդի հրամանատարը հանդիսանում ե գնդի գլխավո-րը, ապա կոմիսարը պետք ե իր գնդի հայրը և հոգին լինի»:

Կոմիսարները և քաղաշատողները—դրանք կուսակցու-թյան աչքերն ու ականջներն են Կարմիր Բանակում: Վոչինչ չպետք ե վրիպի կոմիսարների օրատես, բոլշևիկյան աչքից: Նրանք պետք ե իմանան այն ամենը, ինչ կատարվում ե Կարմիր Բանակի ամեն մի անկյունում, պետք ե լինեն սրա-լինյան Կենտրոնական Կոմիտեյի գլխավոր դժի կիրառողները և կուսկազմակերպությունների հետ միասին արմատում խա-փանեն հնարավոր դավաճանությունը, պաշտպանեն մեր

սիրելի բանակը լրտեսներից, հետևեն, վոր վոչ մի թշնամի չթափանցի մեր շարքերը:

Ռազմական կոմիսարը պարտավոր ե ղեկավարել զորա-մասի կուսակցական—քաղաքական աշխատանքը, ամրապնդել կարգապահությունը, ոգնել իսկական կայուն հրամանա-տարներին՝ հաստատուն ձեռքով զինվորական յերկաթյա կարգապահություն մտցնելու գործում: Հրամանատարի հետ միասին նա պարտախանատու յե զորամասի ամբողջ դրու-թյան և նրա մարտական պատրաստության մակարդակի հա-մար: Բանվորա—Գյուղացիական Կարմիր Բանակն ունի հրա-մանատարական կազմի յերեւելի կադրեր: Քաղաքական ապա-րատի վրա խնդիր ե դրված—ամեն կերպ բարձրացնել հրա-մանատարների հեղինակությունը և դաստիարակել այնպե-սի հրամանատարներ, վորոնք չվախենան վոչ մի դժվարու-թյունից, վորոնք ընդունակ լինեն ամեն տեսակ պայմաննե-րում և ամեն մի պարագայում վորոշում ընդունելու և ստա-լինյան հաստատակամությամբ այդ վորոշումը կյանքում կիրառելու:

Մեզանում յերեւան ե յեկել այժմ կոմիսարի նոր տիպ, վորը հիանալի կերպով գիտե ռազմական գործը: Ընկերներ Ստալինն ու Վորոշիլովը մեզ առաջարկեցին ավիացիայում կոմիսարներ նշանակել ողաչունների—լավագույն կոմունիստ-ների: Այդ ցուցումը մենք կիրառեցինք կյանքում և պետք ե ասել, վոր ավիացիոն զորամասերում կոմիսարի հեղինակու-թյունը հասցված ե հսկայական բարձրության: Առաջ, որի-նակ, կոմիսարը, ողանավախմբակում մարտական հաշվի մեջ չեր մտնում: Յերը զորամասը ոգն եր բարձրանում՝ ուսուց-ման կամ մարտի համար, կոմիսարը մնում եր անբողբոմում, թիկունքում: Այդպիսի կոմիսարը, բնական ե, թռչող ողա-գնացական կազմի մոտ չի կարող հեղինակություն վայելել և չեր ել վայելում: Այժմ ողագնացական զորամասերի կո-միսարները կաղմը մտցված ե ռազմական հաշվի մեջ: Ողա-միսարները կաղմը մտցված ե ռազմական հաշվի մեջ: Ողա-չու—կոմիսարները մարտական մկրտություն ստացան Խա-տանի մարտերում: Ստացվեց կադրերի խնայողություն և բարձրացավ ողանավախմբակների մարտունակությունը: Այդ իմաստով մենք կրկնակի շահեցինք: Մեր խնդիրն այն

ե, վոր ԲԳԿԻ կոմիտեաների ամբողջ կազմը, կատարելապես տիրապետելով մարքսիստական-լենինյան թեորիային, ռազմական գործը հրամանատարից վատ չիմանա:

Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի և ընկեր Մտալինի ղեկավարութեամբ, ընկեր Վորոշիլովի ղեկավարութեամբ ԲԳԿԻ-ի ռազմական կոմիտեաները, քաղաքականները և կուսակցական կազմակերպութեանները լուրջ աշխատանք կատարեցին, վորպեսզի մերկացնեն այն թշնամիներին ու լըրտեսներին, վորոնք ամրացել էին մի շարք մասերում, առավելապես ղեկավար պոստերում: Մենք կարող ենք պատասխանատու կերպով հայտարարել. թշնամին ջախջախված ու վոչնչացված է, մեր կուսակցական կազմակերպութեանները լըջորեն ամրապնդվել են և անսահմանորեն սիրում են կուսակցութեան ստալինյան Կենտրոնական Կոմիտեյին, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Մտալինին: (Բուռն, յերկարատև ծափահարութեամբ): Կեղտը, տականքները մենք կմաքենք ամեն ուր, թշնամիներին ու դավաճաններին կվոչընչացնենք, վորպես կատաղած շներ: Մի խումբ լրտեսների ստոր դավադրութեանը յերբեք չի կրկնվի Բանվորագիտակցական Կարմիր Բանակում: Մենք ձգտելու յենք, վորպեսզի Բանվորագիտակցական Կարմիր Բանակի կուսակցական կազմակերպութեանը լինի մեր մեծ կուսակցութեան ամենաառաջավոր կազմակերպութեանների առաջին շարքերում:

Թշնամական թափթիուկը, վորը դարան եր մտել, գործում եր քաղորդաններում, ամեն կերպ փորձում եր ԲԳԿԻ-ի կոմունիստներին հակադրել տերիտորիալ կուսակցական կազմակերպութեաններին: Այժմ այդ չկա և չի լինի: Քաղորդանների աշխատանքի նպատակն է ուժեղացնել ԲԳԿԻ-ի կոմունիստների կապը տերիտորիալ կուսակցական կազմակերպութեանների հետ:

Մեր կուսակցութեան XVIII համագումարում մենք ունենք յերեք անգամից ավելի զինվորական պատգամավորներ, քան նախորդ համագումարում: Թվերն իրենք խոսում են իրենց մասին, ԲԳԿԻ կոմունիստների հեղինակութեանը լըջորեն աճել է, նրանք սերտորեն կապված են այժմ առկայական կուսակցական կազմակերպութեանների հետ:

ԲԳԿԻ-ի կուսակցական կազմակերպութեանը լուրջ կերպով աճել է, առանձնապես վերջին տարում: Ընկեր Մտալինի նախաձեռնութեամբ գումարվեց քաղաշխատողների համաբանակային խորհրդակցութեան հրամանատարների մասնակցութեամբ: Այդ խորհրդակցութեանը բացառիկ դեր խաղաց մեր կյանքում, և այժմ նրա վորոշումները քաղաշխատողների սեղանի գիրք են հանդիսանում: Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն 1938 թվին հատուկ վորոշում կայացրեց կարմիր-բանակայիններին կուսակցութեան մեջ ընդունելու մասին: Այդ հսկայական արդյունքներ տվեց:

1937 թվին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը վորոշեց կուսակցութեան մեջ ընդունել բանակային 20 հազար կոմյերիտականների: ԲԳԿԻ-ի Գաղվարչութեան և մի շարք ոկրուզների քաղվարչութեանների նախկին թշնամական ղեկավարութեանը ԲԳԿԻ-ի կուսակցական կազմակերպութեաններին ամեն կերպ խանգարում եր՝ կոմյերիտականներին ՀամԿ(Բ)Կ-ի մեջ ընդունելու գործին: Մի տարվա ընթացքում կուսակցութեան մեջ ընդունել են միայն 7 հազար կոմյերիտական, իսկ 1937 թվին ՀամԿ(Բ)Կ-ի շարքերն ընդամենը ընդունել են 13,158 մարդ: 1938 թվին քաղորդաններն ազնվորեն, բուռն իկորեն կատարեցին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի դիրեկտիվը կարմիր-բանակայիններին կուսակցութեան մեջ ընդունելու և ԲԳԿԻ-ի կուսակցական կազմակերպութեաններն ամրապնդելու մասին: Մի ստրվա ընթացքում ՀամԿ(Բ)Կ-ի անդամ և թեկնածու յեն ընդունվել ընդամենը 101.310 մարդ, իսկ 1939 թվին հունվարին ընդունվել է 10.581 մարդ: Այժմ ԲԳԿԻ-ի կուսակցական կազմակերպութեանը շատ ավելի լիարյուն է դարձել, և նրա կազմի մեջ յերեացին կարմիր-բանակայիններ, այն էլ վոչ փոքր թվով:

Ընկեր ղեկեղատներ, քաղաշխատողներին գոռոզանալ չի սաղի: Մեզ մոտ դեռևս շատ թերութեաններ կան աշխատանքում, առանձին քաղորդաններ թույլ են տալիս գործնական լուրջ սխալներ: Սակայն մեր կադրերի բուռն կյան դաստիարակութեան դժով, կարմիր-բանակայինների ուսուցման դժով մեզ մոտ մեծ և լուրջ աշխատանք է կատարվում: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի վորոշմամբ մենք ձեռնա-

մուղ յեղանք «Политучебе красноармейца» հատուկ ժուռնալի հրատարակմանը: «ՀամԿ(բ)»-ի պատմութեան համառոտ դասընթացի», ստալինյան այդ յերեւելի ստեղծագործութեան և կուսակցութեան նվերի լույս ընծայումը կողմնի ԲԳԿԻ-ի կուսակցական և վոչ-կուսակցական բոլշևիկներին լրջորեն բարձրացնելու իրենց զաղափարական ու թեորիական մակարդակը:

Մի յերկու դիտողութիւնն պրոպագանդիստական աշխատանքում կատարված փնտարարութեան մասին, վորը լիկվիդացիայի յենթարկվեց միայն 1938 թվին: Գոյութիւն ունեւր այնպիսի մի պրակտիկա, ըստ վորի միաժամանակ, մի ամբողջ ամսով ստորաբաժանումներից կտրուած էյին վաշտերի, մարտկոցների, ողանավախմբակների և այլնի հրամանատարներին: Այդ կատարվում եր մարքսիստական-լենինյան ուսուցման դրոշի ներքո: Ռազմական պարապմունքներին ամենայնուհեւ ամիսներին հրամանատարներին կտրուած էյին ստորաբաժանումներից և նստեցնում էյին զպրօցական սեղանի շուրջը: Այդ, իհարկե, հասցնում եր այն բանին, վոր տուժում եր մարտական պատրաստութիւնը: Այնուհետեւ, կարմիր-բանակայինների զբաղիտութիւնը բարձրացնելու պատրվակի տակ նրանց կտրում էյին շարային պարապմունքներից յերկար ժամերով: Վերջապես, գիլիգիլայի կուսակցական զպրօցների աշխատանքներն այնպես էյին կազմակերպված, վոր հրամանատարներին և կոմյերիտականներին կտրում էյին շարային պարապմունքներից: Պաշտպանութեան ժողովրդական կոմիտար ընկ. Վորոշիլովի ցուցումով այդ բոլորին վերջ ե տրված:

Շատ թերութիւններ կան մեր կուսակցական հոնձնաժողովների աշխատանքում: Գաղութաններն ու կուսակցական կազմակերպութիւնները հաճախ չափազանց թեթեւամտրեն են վերաբերվում կուսակցութիւնից մարդկանց հեռացնելուն: ԲԳԿԻ-ի Գաղվարչութեանը կից կուսակցական հոնձնաժողովը հարկադրված ե վերականգնել մինչև 50 % սխալ կերպով վտարվածների, իսկ ընկ. Շիկիրյատովն իր կողմից ուղղումներ և մտցնում մեր աշխատանքի մեջ: Մենք պետք ե ընդունենք, վոր կուսակցութիւնից սխալ կերպով վտարվածների թիվը շատ մեծ ե:

Մեզ մոտ յեղել ե կուսակցութիւնից վտարելու այսպիսի վայրենի մի գեպը: Մի գնդի հատուկ բաժնի լիազորը կոմիտարին հայտարարել ե, թե ինքն ուղում ե վերցնել ապրիլի 1-ին քաղդել Ռիբնիկովին: Կոմիտար Գաշինսկին այդ մասին չչնջացել ե կուսակցական կազմակերպութեանը, և Ռիբնիկովը կուսակցութիւնից հեռացվել ե սկզբնական կուսակազմակերպութեան կողմից: Շուտով պարզվեց, վոր Ռիբնիկովը վատ բոլշևիկ չե և վոր հատուկ բաժնի աշխատողները ցանկացել են նրան վերցնել... իրենց մոտ աշխատանքի: Սխալն ուղղվեց, սակայն ընկ. Ռիբնիկովը բավականաչափ հոգովեց:

Սխալ հեռացման դեմ այժմ բողոքում են այն մարդիկ, վորոնք կուսակցութիւնից հեռացվել են 1935, 1936, 1937 թվականներին, յերբ տեղ-տեղ գործում էյին թշնամիները: ԲԳԿԻ-ի Գաղվարչութեանը կից կուսակցական հոնձնաժողովը 1938 թվին քննել ե սխալ հեռացնելու վերաբերյալ բողոքներ շատ ավելի մեծ թիվով, քան նախորդ չորս տարում՝ միասին վերցրած: Վորպեսզի վերջ տանք կոմունիստներին կուսակցութիւնից հեռացնելու ամեն տեսակ այլանդակութիւններին, վորպեսզի հարվածենք կենդանի մարդու նկատմամբ ցուցաբերվող անհոգի-բյուրոկրատական վերաբերմունքին և ճշտորեն կենսագործենք ՀամԿ(բ) Կենտկոմի հունվարյան Պլենումի վորոշումները, մենք պարտավորեցրինք բոլոր միավորումների քաղորդանքներին՝ կուսակցական ակտիվի ժողովներ գումարել և այնտեղ քննարկել կուսակցական հոնձնաժողովների աշխատանքը: Մեզ բոլորիս, բունակային բոլշևիկներին համար ժամանակն ե, վոր ստալինաբար վերաբերվինք կուսակցութեան անդամի բախտին, թույլ չտանք մարդուն հեռացնել անկյուններում տեղի ունեցող քիչ չոցի հիման վրա, այլ գործ ենք միայն փաստաթղթերի ու փաստերի հիման վրա:

Միքանի դիտողութիւններ ԲԳԿԻ-ի կոմյերիտականների մասին: Ընկեր Վորոշիլովը արժանիորեն նրանց անվանում ե մեր յերկրի պաշտպանութեան գործի վոսկե Փոնդը: Միայն մի տարվա ընթացքում, — յես նկատի ունեմ վերջին տարին, — կոմյերիտականների քանակը ԲԳԿԻ-ում ավելի քան

կրկնապատկվեց: Այստեղ զգացվեց դաժադերների ջախջախումը, վորոնք արդեւակում եյին կարմիր-բանակայինների ընդունելութունը կոմյերիտմիության մեջ և խանդարում եյին կոմյերիտականների դաստիարակմանը: Գամարնիկյան բան-դետների լպերճութունը հասել եր մինչև այն աստիճանի, վոր ԲԳԿԻ-ի Գաղվարչության մեջ 1938 թվին չկար վոչ մի քաղաշխատող, վորն զբաղվեր կոմյերիտական գործերով: Ավելի լավ չեր դրութունը նաև ուղուգնների քաղվարչու-թյուններում: Այժմ բանը խիստ փոխված է, սակայն հար-կավոր է ե'լ ավելի ուժգնորեն աշխատել մեր հիանալի կոմ-յերիտականների դաստիարակության վրա:

Կոմյերիտմիության հետ կատարվող աշխատանքի բարե-լավման, նրա աճման գործում հսկայական ազդեցութուն ու-նեցավ համաբանակային կոմյերիտական խորհրդակցությունը, վոր հրավիրվել եր Կենտրոնական Կոմիտեյի վորոշմամբ, ընկ-Անդրեյսկի նախաձեռնությամբ: Ընթացիկ տարում յերիտա-սարդ համալրման հետ միասին մեզ մոտ յեկան հսկայական թվով կոմյերիտականներ: Յերկիրը մեզ վրա աշխատում է հիանալի կերպով: Այժմ ԲԳԿԻ-ում կոմյերիտականները մի-բանի անդամ ավելի շատ են, քան լեհական ամբողջ բանա-կի թիվը խաղաղ ժամանակում: (Ծափահարություններ): ԲԳԿԻ-ում միջնակարգ ու բարձրագույն կրթություն ունե-ցող կոմյերիտականների թիվը 150 հազարից ավելի յե: Ա-հալասիկ յերկրի սոցիալիստական կուլտուրական հեղափո-խության արդյունքներից մեկը: Ինչպես յերկինքը յերկրից, այնպես էլ Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակը տար-բեւոյում է ցարական բանակից: Կուսակցական խովը կոմ-յերիտականների մեջ բալականին բարձր է: Վերջին տարվա ընթացքում այն ավելի քան յեռապատկվել է: Բայց դրա վրա մենք չպետք է հանդստանանք:

Կոմյերիտմիությունը բանակին տվել է և տալիս է քաղաշ-խատողների մեծ բանակ: Յես նկատի ունեմ առաջին հերթին քաղղեկների տեղակալների ինստիտուտը: Ինչպես հայտնի յե, 1938 թվին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը մեզ թույլ տվեց կոմյերի-տականներին քաղղեկների տեղակալներ նշանակել: Քաղաշ-խատողների ստալինյան այդ յերեւելի ջոկատը, վոր դոյու-

թյուն ռենի ընդամենը մի տարի, վայրուն կերպով արդա-բացրեց իրեն: Քաղղեկների տեղակալները կարմիր-բանա-կայինների հետ միասին ապրում են գորանոցներում, գիտեն կարմիր-բանակայինների կենցաղը և սլահանջները և նրանց մոտ հսկայական հեղինակութուն են վայելում:

Քաղղեկների տեղակալների մարտական հատկություն-ների մասին վկայում են այսպիսի վաստերը:—Սասան լճի մոտ ցուցաբերած հերոսության համար կառավարությունը Լենինի շքանշանով պարգեատրեց քաղղեկների յերկու տե-ղակալների, «Կարմիր Դրոշին» շքանշանով—քաղղեկների 30 տեղակալների, «Կարմիր Աստղի» շքանշանով—քաղղեկների 16 տեղակալների, «Անվահերության համար» մեդալով—քաղղեկների 20 տեղակալների, «Մարտական ծառայություն-ների համար» մեդալով—քաղղեկների 9 տեղակալների: Քաղ-ղեկի տեղակալ ընկ. Բամբուրովին կառավարությունը պար-գեատրել է Լենինի շքանշանով, նրան տալով Սորհրդային Միության հերոսի կոչում: (Ծափահարություններ):

Մեր բանակն ամուր է, ընկերներ, և անպարտելի յե իր հեղափոխական վոգով ու այն առաջնակարգ տեխնիկայով, վորով նրան սպառազինել են ստալինյան հնդամյակները: Վերջերս յապոնական ռազմամոլները գերմանական Փաշխտ-ների հետ խոսքը մեկ արած ցանկացան մեզ չոչափել Զառ-գերնայա բարձունքի վրա, Մոսկվայից 10 հազար կիլոմետր հեռու: Բանից դուրս յեկավ, ընկերներ, վոր մենք չոչափե-ցինք յապոնացիներին և այն ել հիմնավորապես դադեցինք չափն անցկացրած աղբսորներին: Յապոնական դեսպան Սիգեմիցուն ամբողջ աշխարհով մեկ սպառնում եր, վոր Չանկուֆին բարձունքն ուժով կվերցվի: Պրոփոկացիան իո-կապես իրադործվեց: Իսկ ինչպիսի՞ն եր նրա Փինայը: Յե-քեք անգամ Սիգեմիցուն վաղեց մեր Արտաքին Գործերի Ժո-դովրդական Կոմիսարի մոտ՝ զինադադար խնդրելով: Մենք համաձայնեցինք դադարեցնել ռազմական գործողություննե-րը միայն այն ժամանակ, յերբ խայտառակ կերպով դուրս քշեցինք խորհրդային հողից յապոնական զավթիչներին: Սի-գեմիցուն լավ կյանքից չեք, վոր վաղում եր Լիտվինովի մոտ խոնարհաբար խնդրելու և խայտառակում եր «յապո-

11- 288359

նախան գինւորականութեանը: Բանը նրանումն է, զոր
գնանտունյան բանակը խայտառակված է կարմիր-բանակա-
յինների սվինների հարվածների տակ: Դրանով է բացատրու-
վում Սիգեմիցուի «մահացու թռիչքը», վորին կարող են նա-
խանձել լավագույն ակրորատները:

Վորպեսզի պատկերացում ունենանք խասանի մարտերի
ժամանակ մեր բանակի ունեցած տրամադրությունների մա-
սին, յես կրեւեմ միքանի փաստաթղթեր:

Ահա մի դեղի վաշտի միտինգը հենց մարտից առաջ:
Ինչի՞ մասին են վորոշում կատարել կարմիր-բանակայիննե-
րը: Նրանց վորոշումը կարճ է.

«Մենք, զորամասի մարտիկներս, հրամանատարներս և
քաղաշխատողներս, հալաստիացնում ենք մեր հրամանատա-
րութեանը, վոր հայրենիքը պաշտպանելու պարտքը մենք
կկատարենք այնպես, ինչպես վայել է մեր հայրենիքի ան-
կեղծ հայրենասերներին: Յապոնացիները մի անգամ չե,
վոր փորձել են խանդարել մեր խաղաղ աշխատանքը, մեր
խաղաղ կյանքը: Չկա այլևս համբերութեամբ, նրա վերջը
յեկել է: Յեկել է ժամանակը վերջ տալու յապոնական իժե-
րին: Մեզ բախտ է վիճակվել լինել այն վնասակամ մարտի
մեջ, վորը սանձահարելու յե չափն անցկացրած սամուրայ-
ներին: Գնալով մարտի, մենք մեր սրտերում պահում ենք
նրա անունը, ով մեզ տվել է յերջանիկ կյանք, ով մեզ տա-
նում է հաղթանակից-հաղթանակ, — դա Ստալինն է»: (բուռն
ծափահարութեամբ):

Ձառկերնայա բարձունքի մոտ տեղի ունեցած մարտերի
առաջին օրերին խորհրդային շատ քաղաքացիներ վճռել ե-
լին, թե խասան լճի մոտ պետք է փոստի ինչ-վոր կայան լի-
նի, ուստի և իրենց հայրենասիրական հեռադրերն ուղարկում
էին այսպիսի հասցեյով. «Հեռավոր Արևելք, խասան լճի
փոստային կայան»: (Ծիծաղ):

Մեր կարմիր-բանակայինը, վորի նամակը յես կհրապա-
րակեմ, տվել է իր հասցեն. «Խասան լճի մոտ»: Այս փառ-
տաթուղթը ցույց է տալիս, թե ինչպես հարադատորեն կապ-
ված է Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակն ամբողջ
Ժողովրդի հետ:

Նրա նամակն ասում է.

«Բարև ձեզ, Վորոգդայի ՄՏԿ-ի և ՄՏՄ-ի հարգելի կու-
տնաբեականներ: Առաջինը, հաղորդում եմ, վոր յես ներ-
կայումս գտնվում եմ Հեռավոր-արևելյան ճակատում: Հու-
լիսի 30-ին ընդհարվեցինք յապոնական զորքերի հետ, վո-
րոնք ներխուժել էին խորհրդային հողը և գրավել էլին
Ձառկերնայա բարձունքն ու Բեզիմյաննայա բլուրը, վորտեղ
նրանց հաջողվեց բեռոնապատվել և նրանք յերազում էլին,
թե անպարտելի յեն: Բայց յերբ կուսակցութեանն ու կառա-
վարութեանը հրաման տվին — ջարդուփչուր անել յապոնա-
կան սամուրայներին, վորոնք ներխուժել էլին մեր տերի-
տորիան, այդ հրամանը կատարվեց մեր յերկրի ամբողջ Ժո-
ղովրդի առաջ ամենակարճ ժամկետում, 3—4 օրում: Այս-
տեղ յապոնացիները քիչ չէին, բայց յերբ բարձրացան մեր
պանծալի բաղնիքը և գնացին մեր տանկերի զորայունե-
րը, գնացին կարմիր-բանակայինները, ապա յապոնական
դեսպան Սիգեմիցուի վորը միանգամից դադարվեց և նա դի-
մեց ընկեր Լիտվինովին, վորպեսզի դադարեցվեն ռազմա-
կան գործողութեանները և վերականգնվի սահմանը խաղաղ
ճանապարհով, և համաձայնեց այն բոլոր պայմաններին,
վոր նրան առաջարկեց խորհրդային Միութեանը»:

Կարմիր-բանակային վոգջույն հաղորդելով իր բարե-
կամներին ու մոտիկներին, նա ստորագրել է.

«Ձեզ հայտնի՝ բանվորական ընտանիքի անդամ Ռա-
զումնի»: (Ծափահարութեամբ):

Ահա մի ուրիշ յերևելի փաստաթուղթ, վորը Բելոռու-
սիա յե ուղարկվել: Նրա հեղինակը դասակի հրամանատար
լեյտենանտ Մատվեյենկոն է:

«Ամբողջ յերկիրը, — գրում է Մատվեյենկոն, — հետևում էր
այն մարտերի ընթացքին, վոր ծավալվել են խասան լճի մոտ:
Յապոնական ռազմամուկները կովի պրոֆիկացիա յեն անում
մեր դեմ: Նրանք իրենց ֆաշիստական կեղտոտ թաթը մեկ-
նել են մեր ծաղկող յերջանիկ հայրենիքի վրա: Ֆաշիստա-
կան հափշտակիչներն իրենց հաշիվների մեջ սխալվեցին:
Նրանք այնպիսի հակահարված ստացան, վոր իրենց շարքե-
րից հաղարավոր սպիտակ-բանդիտներ կորցրին, և մեր ար-
յան մի կաթիլի համար փթերով սամուրայների արյուն վճա-

ընդհին: Նրանք զգացին մեր Կարմիր Բանակի ուժն ու հզորությունը: Յես կուսակցության և կառավարության վստահությունն արդարացրի: Իմ դասակը և իմ տանիը գերազանց եյին կովում: Մենք շարքից հանեցինք յապոնական 8 հրանոթ և հսկայական քանակությամբ սամուրայները»:

Կոլտնտեսականներին ուղղած իր նամակը Մատվեյենկոն վերջացնում է հետևյալ խոսքերով. «Համերաշխորեն, կոլեկտիվով կուլտուրական ունեւոր կյանք կառուցեք բոլոր կոլտնտեսականների համար: Թույլ տվեք հավաստիացնել, վոր ձեր կոլտնտեսության անդամը պաշտպանում է Ձեր ազնիվ, խաղաղ աշխատանքը: Ձեր կոլտնտեսության անդամ Մատվեյենկո»:

Ընկերներ: Այն հրամանատարներն ու կարմիր-բանակայիները, վորոնք գործուղված չեյին գործող զորամասերի ռայոնը, հաղարավոր Թախանձական նամակներ եյին ուղարկում, վորոնցով խնդրում եյին՝ իրենց ուղարկել կովի:

Ահա տանկիստների մի խմբի լակոնական նամակը.

«Մենք, գերակետիկ և պարտադիր ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարներս—տանկիստներս, վոր դաստիարակված ենք կոմյերիտմիություն ձեռքով, տանկի հրամանատար Վ. Մ. Ագարկովս, մեխ. ղեկ. Ն. Ս. Ժիտենեվս և աշտարակի հրամ. Ս. Մ. Ռումյանցեվս,— տիրապետելով այդ ահալոր մեքենային, վստովում ենք չափն անցկացրած յապոնական սամուրայներին ջախջախելու ցանկությամբ և չենք կարող հանգիստ նստել այս ահեղ ժամին»:

Խնդրում ենք Կարմրադրոշ Հեռավոր-արևելյան ճակատի 1-ին բանակի Ռադական Խորհրդին՝ մեզ ուղարկել կովի դաշտը: Մենք յերդվում ենք հայրենիքի առաջ, կուսակցության առաջ, կառավարության առաջ, վոր մեր ընկերների համար վրեժխնդիր կլինենք և անխնա կվոչնացնենք Ֆաշիստական իտերին:

Խնդրում ենք չմերժել մեր խնդիրը:

Մեքենայի հրամանատար՝ Ագարկով:

Մեք. ղեկ.՝ Ժիտենեվ:

Աշտարակի հրամանատար՝ Ռումյանցեվ»:

Մարտերի ժամանակ կուսակցական և կոմյերիտական

կազմակերպությունները հրամանատարներին ու կարմիր-բանակայիներին հաղարավոր դիմումներ ստացան, վորոնցով վերջիններս խնդրում եյին կուսակցության և կոմյերիտմիության մեջ ընդունել իրենց:

Գործող զորամասերի քաղորդաններն անպատրաստ դուրս յեկան, նրանք իրենց հետ բախարար քանակությամբ կուսակցական ու կոմյերիտական փաստաթղթեր չեյին վերցրել: Մեր փառապանծ ողաչունները հարկադրված եյին այս բանում ել աշխատել և գործող զորամասերին անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև լրագրեր հասցնել: Շուտով յեկան յեկավ նաև իրենց սեփական մեծ լրագիրը՝ «На защиту родины», վոր հրատարակում էր Ն կորպուսի քաղաքային:

Ահա կարմիր-բանակայիների մի քանի նամակներ.

«ОБС 40 N վաշտի կոմյերիտական կազմակերպությանը

Վասիլի Կոլեսնիկովին

Դիմում

Խնդրում եմ վաշտի կոմյերիտական կազմակերպությանը՝ ինձ հանձնարարական տալ Համկ(բ)Կ-ի Թեկնածու ընդունվելու համար: Ձեռքը ձեռքս պաշտպանելով Միության սահմանների անձեռնմխելիությունը, յես ուզում եմ, յեթե հարկ լինի մեռնելու, ապա մեռնեմ միայն վորպես կուլուցիստ:

ՀամկԿՅԵՄ-ի անդամ 1929 թ. փետրվարի 16-ից տոմս № 6289673, Վ. Կոլեսնիկով»:

Ընդհանուր գրոհից մի օր առաջ, ոգոստոսի 5-ին, ընկ. Շչեդովսկին այսպիսի դիմում է տվել.

«6820 գորամասին կից կուսբյուրոյին

Դիմում

Յես, ինչպես և բոլոր ընկերները, մանավանդ կոմյերիտականները, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, անհրաժեշտ եմ համարում կրկին անդամ հաստատել իմ նվիրվածությունը՝ Լենինի—Մտալինի մեր կուսակցությանը: Այս մարտական օրը յես խնդրում եմ կուսբյուրոյին՝ ընդունել ինձ կուսակցության Թեկնածու:

Քոլոր պահանջները կկատարեմ միայն ըստ կանոնադրութեան, միայն գերազանց: Պարտավորվում եմ անխնայ ջանքերով թշնամուն, լինել միայն առաջադր շարքերում, ամեն ինչ տալ հայրենիքի պաշտպանութեան համար, նրա հաղթանակի համար:

Խնդրում եմ չմերժել: Շնչեղովսկի»:

Յետ պետք է համադրւմարին ծանոթացնեմ ևս մի փաստաթղթի հետ, վորոնց թիվը կարող եյի հարյուրապատիկ շատացնել:

«Յես 28 տարեկան եմ,—գրում է իր դիմումի մեջ լեյտենանտ Գլոտովը,—յես շատ չեմ ապրել դեռևս, սակայն ամբողջ իմ այդ կարճ կյանքի ընթացքում յես ազնվորեն աշխատել եմ հայրենիքի համար, ժողովրդի համար: Մտքերով, իմ ամբողջ եյուլթյամբ յես վաղուց բոլշևիկյան կուսակցութեան մեջ եմ: Այժմ, յերբ յես պաշտպանում եմ սահմանը թշնամական հրոսակներից, յես ուզում եմ լինել կոմունիստ: Խընդրում եմ ինձ ընդունել Համկ(բ)կ-ի շարքերը—և, յեթե քչնամու գնդակը ցած գլորի ինձ կովի դաշտում, խնդրում եմ ինձ բոլշևիկ համարել»։ (Յերկարատև ծափահարություններ)։

Գլոտովին, այդ յերեկի բոլշևիկին, ընդունեցին կուսակցութեան մեջ ոգոստոսի 4-ին: Բայց նա կուսակցական տոժս չկարողացավ ստանալ: Ոգոստոսի 6-ին՝ Չաոգերնայա բարձունքի համար մղվող մարտերում հայրենիքի այդ քաջարի զավակը, կոմունիստը, մեռավ հերոսական մահով: Այն զորամասի մարտիկները, վորտեղ ծառայում էր Գլոտովը, յերկար կհարգեն իրենց ընկերոջ հիշատակը:

40-րդ դիվիզիայի գնդերում մրցություն ծավալվեց—ով առաջինը կկանգնեցնի դրոշակը Չաոգերնայա բարձունքի վրա: Այդ պատիվը վիճակվեց լեյտենանտ Մոչլյակին մի խումբ մարտիկների հետ, վորն այժմ ներկա յե մեր համադրւմարում: Ընկ. Մոչլյակը գնդի կուսակցական բյուրոյի քարտուղարն է: Նա փառքով պսակեց իր կուսակցական կազմակերպությունը և իր գունդը: Մի՞թե այդ չի վկայում այն ավանդադային դերի մասին, վոր խաղացին կոմուն-

իստները Չաոգերնայա բարձունքի վրա տեղի ունեցած մարտերում: Հոսանքը դեպի կուսակցութեան շարքերը, դեպի կոմյերիտմիութեան շարքերը—Չաոգերնայա բարձունքի մոտ մարտնչած մեր կոմունիստների ու կոմյերիտականների լավագույն ատեստացիան է:

Չաոգերնայա բարձունքի համար մղվող մարտերի ժամանակ յես գտնվում էյի Հեռավոր-Արեւելքում: Բնական է, վոր յես ցանկացա գնալ գործող զորամասերը: Յես հարցնում էյի կարմիր-բանակայիններին. «Ընկերներ, ասացե՛ք, դիտե՞ք դուք արդյոք, թե ինչպիսի խնդիրներ են դրված մեր առջև»: Յեմ կարմիր-բանակայինները պատասխանում էյին. «Դիտենք, ընկեր կարմիր-բանակային կոմիսար, յայտնացինե՛ր բալականին պարտք են մնացել մեզ, ժամանակն է հաշիվը մաքրելու»: (Ծիծաղ, ծափահարություններ)։

Յերբ ընկ. Շտերնը ուղևորվեց յայտնացիների հետ բանակելու և Չաոգերնայա բարձունքում կարմիր-բանակայինների մի խմբի հարցրեց, թե դիտե՞ն արդյոք նրանք դեռևս շաղաղարի մասին, դո՞ւ հեն արդյոք, ասպա այդ մարտիկների գեմքերը բալականին մոայլած էյին: Սկզբում մեր ընկերները յենթադրեցին, թե դուցե կարմիր-բանակայինների մոտ մթերքներն են պակաս, դուցե, թեյն է պակաս: Կարմիր-բանակայիններին հարցրին, թե արդյոք բոլորն էլ մթերքներ ստացե՞լ են, թե վոչ: Ստացվեց այսպիսի պատասխան. «Բանը մթերքները չեն, մենք ունեյինք մեր պլանը»:—«Իսկ ի՞նչ պլան ունեյիք դուք, ընկեր մարտիկներ»:—«Մեր պլանն այս է. մի լավ չրմփացնել յայտնացիներին, այնպես, վոր նրանք հետ գլորվեն թեկուզ մինչև Խարին և չհամարձակվեն այլևս անհանդստացնել մեզ»: (Յերկարատև ծափահարություններ): Այս բանը անխելք հարեանը չի կարող հաշվի չառնել:

Յերբ յայտնացիները գրավեցին Չաոգերնայա բարձունքը մեր հերոս սահմանապահների խմբից, նրանք շտապեցին Չանկուֆին բարձունքի անունը փոխել և ձոչել «Այկյուլ-ձյան» և, հասկանալի յե, աղմկել իրենց գնդի անպարտելիութեան մասին: «Այկյուլ-ձյան»-ը թաղամանիով ուսաներ-

նի, նշանակում ե. «Արդարության ու քաջության սար»: Իմ կարծիքով, նրանք վատ անուն չտվին, վորովհետև ե' արդարությունը, ե' քաջությունը մնաց Բանվորա-Պրոլետարիան Կարմիր Բանակի կողմը: (Ծիծաղ, ծափահարություններ):

Ամբողջ աշխարհով մեկ խայտառակվելով, յապոնական ռազմամոլներն սկսեցին պատրվակներ ղեմել՝ նեղ դրություններից դուրս գալու համար: Հարկավոր եր մի կերպ իրենց յերկրի առաջ հաշիվ տալ: Յեւ ահա իրենց թերթերում նրանք սկսեցին գրել, թե անձրևը խանդարեց իրենց: Բայց նրանք ժողովրդին չասացին միայն, թե ինչպիսի անձրևի մասին եր խոսքը: Խորհրդային տերիտորիայի վրա նրանց մնալուն իսկապես խանդարեց անձրևը, միայն թե արձճե անձրևը, վորն առաջացել եր վորոշիկովյան համադարկերից: (Յերկայատու ծափահարություններ):

Ընկեր պատգամավորներ, չկա աշխարհում ավելի լավ մարտիկ, քան մեր կարմիր-բանակայինը—մեր մեծ անպարտելի խորհրդային ժողովրդի զաւակը: (Ծափահարություններ): Մեր առջև ծառացած ե միայն մի խնդիր—չդողողանալ, համառորեն աշխատել մեր մարտիկի մարտական պատրաստության բարձրացման համար, վորպեսզի նա միշտ և ամենուրեք սակավ արյունով վոջնչացնի թշնամուն:

Մարտերը ցույց տվին մեր յերեւելի, հիանալի հրամանատարներին, կուսակցական և վոչ-կուսակցական բոլշևիկներին, վորոնք սերում են իրենց՝ Լենինի—Ստալինի մեծ կուսակցութունը, իրենց հայրենիքը և վորոնք պատրաստ են, յեթե պետք լինի, մեռնելու հայրենիքի համար: Մարտերը ցույց տվին, վոր աճել ե կոմիսարները—ստալինյան կոմվածքի մարդկանց—բոլշևիկյան գորախումբը, ստալինյան Կենտրոնական Կոմիտեյի ու Խորհրդային Կառավարության հաստատակամ աշալուրջ ժամապահների բոլշևիկյան գորախումբը:

Ուտարեկրյա կապիտալիստական ինտերվենցիայի վտանգը վոջնչացնելու համար պետք ե վոջնչացնել կապիտալիստական շրջապատումը, ասված ե «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ: Հեռու չե, ընկերներ, այն ժա-

մանակը, յերբ մեր բանակը, վորն ըստ իր մեջ տիրապետող իդեոլոգիայի ինտերնացիոնալ բանակ ե, ի պատասխան թըշնամու լպիրշ արտելքին կոգնի ագրեսոր-յերկրների բանվորներին՝ ազատագրվելու Ֆաշիզմի լծից, կապիտալիստական ստրկության լծից և լիկվիդացիայի կենթարկի կապիտալիստական շրջապատումը, վորի մասին ասաց ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ):

Կեցցե՛ մեր Լենինի—Ստալինի կուսակցութունը, հա՛մաշխարհային պրոլետարական հեղափոխության կուսակցութունը:

Կեցցե՛ մեր առաջնորդը և ուսուցիչը, թող հավիտյան ապրի մեր հարազատ Ստալինը: (Բուռն, յերկարատև ուլացիա: Բացականչություններ: «Ուռա», «Կեցցե՛ մեր հարազատ ընկեր Ստալինը»):

ՀՀ Ազգային գրադարան



NL0928231

Հայերեն թարգմ. խմբագիր Ս. Հակոբյան
Տեխն. խմբագիր Հ. Մանվելյան
Մրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արսվյան

Գլավիտի լիազոր ՊՏ—1708, հրատ. № 689

Պատվեր № 88, տիրաժ 10.000

Հանձնված է արտադրության 5/V 1939 թ.

Ստորագրվել է տպագրելու 15/V 1939 թ.

Դիմը 25 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տղարան,
Յերևան, Սլավոկերդյան № 65

271

31 МАЯ 1939

9-161 25 ч.

11

28835

А. МЕХАИС
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ
ВКП(б)

Армиз—Издательство полит. литературы
Ереван, 1939